ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 56

«05» 08 202/ թ. ք. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ, ԻՍԿ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ ԿԽ-001/21/4 որոշմամբ հաստատված՝ դատախազների թեկնածությունների 2021թ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով նախատեսված՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները վերահանձնելու, իսկ արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար՝ գնահատման և բողոքարկման հանձնաժողովներ ձևավորելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Դատախազների թեկնածությունների 2021 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսերի արդյունքները վերահանձնելու համար ձևավորել գնահատման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Արթուր Չախոյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ,

Կարեն Բիշարյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ,

Միեր Մկրտչյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,

Արմեն Գևորգյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ,

Կարեն Ամիրյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ:

2. Դատախազների թեկնածությունների 2021 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննության վերահանձնման արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորել բողոքարկման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գևորգ Բաղդասարյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,

Արմեն Մարուխյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ